

1049



Վ. Ի. ԼԵՆԻՆ

ԲՈԼՈՐՍ ՊԱՅՔԱՐԻ
ԸՆԴԴԵՄ ԴԵՆԻԿԻՆԻ

Ո՛Ր (ԲՈԼՇԵՎԻԿՆԵՐ) Կ' ԿԿ-Ի ՆԱՄԱԿԸ
ԿՈՒՄՍՈՑԻՔՈՆ ԿԱԶՄԱՆՈՐԳՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՆ

3K23

P-81

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԳՈՒԹՅՈՒՆ

ՏԵՐԻՖԱՆ Թ 1940

3 MAY 2005

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՅԵՐ

103 NOV 2009

3K23
F-81

այս

Վ. Ի. ԼԵՆԻՆ

ԲՈԼՈՐՍ ՊԱՅՔԱՐԻ՝
ԸՆԴԴԵՄ ԴԵՆԻԿԻՆԻ

ՌԿ (ԲՈԼՇԵՎԻԿՆԵՐԻ) Կ ԿԿ-Ի ՆԱՄԱԿԸ ԿՈՒՍԱԿՅՈՒԹՅԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

11 0 SEP 2013

7049



В. И. ЛЕНИН

ВСЕ НА БОРЬБУ С ДЕНИКИНЫМ!

Письмо ЦК РКП (большевиков)

к организациям партии

Государственное издательство политической литературы
Ереван ● 1940

ԲՈՒՆՈՐՍ ՊԱՅՔԱՐԻ՝ ԸՆԴԴԵՄ ԴԵՆԻԿԻՆԻ

ՌԿ (ԲՈՒՆԵՎԻԿՆԵՐԻ) Կ ԿԿ-Ի ՆԱՄԱԿԸ ԿՈՒՍԱԿՅՈՒԹՅԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ՝¹

Ընկերներ: Վրա յե հասել սոցիալիստական հեղափոխու-
թյան ամենակրիտիկական մոմենտներից մեկը, ամենայն հավա-
նականությամբ՝ նույնիսկ ամենակրիտիկականը: Ծառադործող-
ների՝ կալվածատերերի և կապիտալիստների ոռոսական և ոտա-
բերկրյա (առաջին հերթին անգլիական և ֆրանսական) պաշտ-
պանները հուսահատ փորձ են անում վերականգնելու ժողովրդ-
դական աշխատանքը կողոպտողների՝ կալվածատերերի ու շահա-
գործողների իշխանությունը Ռուսաստանում, վորպեսզի ամրա-
պնդեն ամբողջ աշխարհում ընկնող իրենց իշխանությունը: Անգ-
լիական և ֆրանսական կապիտալիստների պլանը՝ նվաճել Ուկ-
րաինան իրենց գործերով, վիժեց. վիժեց Սիբիրում Կոլչակին
նրանց ցույց տված ոժանդակությունը. Կարմիր բանակը,
հերոսաբար առաջ շարժվելով Ուրալում՝ գլխովին ապստամբող
ուրալյան բանվորների ոգնությամբ, մոտենում է Սիբիրին, վոր-
պեսզի ազատագրի նրան աշխտեղի տիրակալների՝ կապիտալիստ-
ների չլաված լծից և դադանությունից: Վերջապես, վիժեց նաև
անգլիական և ֆրանսական իմպերիալիստների պլանը՝ գրավել
Պետրոգրադը հակահեղափոխական դավադրության միջոցով,
վորին մասնակցում էյին ոռոսական միապետականները, կադետ-
ները, մենչևիկներն ու եսերները, առանց բացառելու նաև ձախ
եսերներին:

¹ ՌԿ (բուլլետենների) Կ ԿԿ-ի նամակ՝ «Բոլորս պայքարի ընդդեմ Դենիկինի»
ստալին անդամ տպվել է 1919 թ. հուլիսի 9-ին «Известия ЦК РКП(б)»
թերթի № 4-ում: Խմբ.:

Այժմ արտասահմանյան կապիտալիստները հուսահատ փորձ են անում վերականգնելու կապիտալի լուծը Դենիկինի արշավանքի միջոցով, վորին նրանք, ինչպես մի ժամանակ նաև Կոլչակին, ոգնություն ցույց տվին սպաներով, մատակարարմամբ, արկերով, տանկերով և այլն և այլն:

Բանվորների և գյուղացիների բոլոր ուժերը, խորհրդային հանրապետության բոլոր ուժերը պետք է լարել՝ Դենիկինի արշավանքը հետ մղելու և նրան հաղթելու համար, առանց կանգնեցնելու Կարմիր բանակի հաղթական առաջխաղացումը Ուրալի և Սիբիրի վրա: Այդ է

ՄՈՄԵՆՏԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ

Նախ և առաջ ու ամենից ավելի բոլոր կոմունիստները, նրանց բոլոր համակրողները, բոլոր ազնիվ բանվորներն ու գյուղացիները, խորհրդային բոլոր աշխատողները պետք է ձիգ առան իրենց ռազմականորեն, փոխադրելով իրենց աշխատանքի, իրենց ջանքերի և հոգսերի առավելագույնը պատերազմի անմիջական խնդիրների վրա, Դենիկինի արշավանքն արագորեն հետ մղելու վրա, կրճատելով և վերակառուցելով—այդ խնդրին ստորադասելով—իրենց մնացյալ ամբողջ գործունեությունը:

Խորհրդային հանրապետությունը պաշտպանված է թշնամու կողմից: Նա պետք է միասնական ռազմական ճամբար լինի վո՛չ թե խոցքով, այլ գործով:

Բոլոր հիմնարկների ամբողջ աշխատանքը հարմարեցնել պատերազմին և վերակառուցել ըստ ռազմականի:

Կոլեգիալությունն անհրաժեշտ է բանվորների և գյուղացիների պետության գործերը վճռելու համար: Բայց կոլեգիալության ամեն մի չափազանցումը, նրա ամեն մի խնդրաթուրումը, վոր հանգում է քաջըլուկի, անպատասխանատվության, կոլեգիալ հիմնարկների ամեն մի վերածումը խոսարանների, մեծագույն չարիք է և այդ չարիքին պետք է վերջ տալ ինչ գնով էլ լինի, վորքան կարելի չէ շուտ, կանգ չառնելով վոչ մի բանի առջև:

Կոլեգիալությունը բացարձակապես անհրաժեշտ նվազագույնից չպետք է անցնի՝ վո՛չ կոլեգիաների անդամների թվի նկատմամբ, վո՛չ աշխատանքը գործունակ կերպով վարելու նկատմամբ, «ճառերն» արդելելու, կարծիքների փոխանակումը մեծագույն արագությունով կատարելու, այդ փոխանակումն իրադե-

կումով և գործնական ճշգրիտ առաջարկներով սահմանափակելու նկատմամբ:

Ամեն անգամ, յերբ դեթ ամենափոքր հնարավորություն կա, կոլեգիալությունը պետք է հանգի միայն ամենակարևոր հարցերի ամենակարճատև քննարկմանը ամենափոքր կոլեգիալում, իսկ հիմնարկի, ձեռնարկության, գործի, խնդրի գոյծնական տնօրինումը պետք է հանձնարարվի մեկ ընկերոջ, վորը հայտնի չի իր հաստատակամությունը, վճռականությունը, համարձակությունը, պրակտիկ գործը վարելու հատվածում, վորը մեծագույն վստահություն է վայելում: Համենայն դեպս և առանց ցառություն բոլոր հանգամանքներում կոլեգիալությանը պետք է զուգակցված լինի յուրաքանչյուր անձի անձնական պատասխանատվության ամենաճշգրիտ սահմանումը՝ ճշտվվ վորոշված գործի համար: Այն անպատասխանատվությունը, վորը ջողարկվում է կոլեգիալությունը վկայակոչելով, ամենավտանգավոր չարիքն է, վորը սպառնում է բոլորին, ովքեր շատ մեծ փորձառություն չունեն գործունակ կոլեգիալ աշխատանքում, և վորը ռազմական գործում համարյա միշտ անխուսափելիորեն բերում է կատաստրոֆի, քաոսի, խուճապի, բազմիշխանություն, պարտություն:

Վոչ պակաս վտանգավոր չարիք է կազմակերպական իրաբանցումը կամ կազմակերպական պրոթեկտորությունը: Աշխատանքի այն վերակառուցումը, վորն անհրաժեշտ է պատերազմի համար, վոչ մի դեպքում չպետք է հանգի հիմնարկների վերակառուցման, առավել ևս հույսերի նոր հիմնարկների ստեղծման: Այդ միանգամայն անթույլատրելի չէ, այդ միայն քաոս է բերում: Աշխատանքի վերակառուցումը պետք է լինի այն, վոր ժամանակավորապես պետք է կանգ առնեն վոչ բացարձակապես անհրաժեշտ հիմնարկները կամ դրանք վորոշ չափով կրճատվեն: Սակայն պատերազմին ոգնելու ամբողջ աշխատանքը պետք է կատարվի ամբողջապես և բացառապես արդեն գոյություն ունեցող ռազմական հիմնարկների միջոցով, կանոնավորելով, ամրացնելով, ընդարձակելով դրանք, աջակցելով դրանց: Հատուկ «պաշտպանության կոմիտեներ» կամ «հեղկոմներ» (հեղափոխական կամ ռազմա-հեղափոխական կոմիտեներ) ստեղծելը թույլատրելի չէ նախ՝ միայն վորպես բացառություն, յերկրորդ՝ վոչ այլ կերպ, յեթե վոչ համապատասխան ռազմական իշխանության կամ խորհրդային բարձրագույն իշխանության հաստատմամբ, յերրորդ՝ վերահիշյալ պայմանի պարտադիր կատարմամբ:

ԿՈԼԶԱԿԻ ՅԵՎ ԴԵՆԻԿԻՆԻ ՄԱՍԻՆ ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ
ԺՈՂՈՎՐԴԻՆ ԲԱՅԱՏՐԵԼԸ

Կոլչակը և Դենիկինը խորհրդային հանրապետության գլխավոր և միակ լուրջ թշնամիներն են: Յեթե Անտանտը (Անգլիան, Ֆրանսիան, Ամերիկան) նրանց չօգնե, նրանք վաղուց քայքայված կլինեյին: Միմիայն Անտանտի ոգնությունն է, վոր նրանց ուժ է դարձնում: Բայց և այնպես նրանք ստիպված են խարել ժողովրդին, ժամանակ առ ժամանակ կողմնակից ձևանալ «դեմոկրատիային», «Սահմանադիր ժողովին», «Ժողովրդապետությանը» և այլն: Մենչևիկներն ու եսերները սիրահոժար կերպով խարել են տալիս իրենց:

Այժմ Կոլչակի վերաբերմամբ (իսկ Դենիկինը նրա կրկնորդն է) ճշմարտությունը կատարելապես բացված է: Տասնյակ-հազարավոր բանվորների գնդակահարում: Նույնիսկ մենչևիկները և եսերները գնդակահարում: Գյուղացիների դանաճարում ամբողջ դավաճներով: Կանանց դանաճարում հրապարակորեն: Սպաների, կալվածատերերի մանչուկների լիակատար խրախճանք: Անվերջ կողոպուտներ: Այս է ճշմարտությունը Կոլչակի և Դենիկինի մասին: Նույնիսկ մենչևիկների և եսերների մեջ, վորոնք իրենք բանվորների դավաճաններն էին, Կոլչակի և Դենիկինի կողմն էին, գնալով ավելի շատ մարդիկ են գտնվում, վորոնք ստիպված են այս ճշմարտությունն ընդունելու:

Պետք է ազիտացիայի և պրոպագանդայի անկյունաքարը դարձնել այդ բանը ժողովրդին իրողեկ դարձնելը: Պետք է սրբազանել, վոր կամ Կոլչակն ու Դենիկինը, կամ խորհրդային իշխանությունը, բանվորների իշխանությունը (դիկտատուրան) միջին ճանապարհ չկա. միջին ճանապարհ չի կարող լինել: Առանձնապես պետք է ոգտագործել վոչ-բոլշևիկների վկայությունները, այն մենչևիկներին, եսերներին, անկուսակցականներին, վորոնք յեղել են Կոլչակի կամ Դենիկինի մոտ: Թո՛ղ ամեն մի բանվոր և գյուղացի գիտենա, թե ինչի համար է մղվում կռիվը, ինչ է սպասում նրան՝ Կոլչակի կամ Դենիկինի հաղթելու դեպքում:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄՈՔԻԼԻԶԱՑԻԱՅԻ ՅԵՆԹԱՐԿՎՈՂՆԵՐԻ ՄԵՋ

Այժմ հոգատարության գլխավոր առարկաներից մեկը պետք է դառնա մոբիլիզացիայի յենթարկվողների մեջ, մոբիլիզացիային ոգնելու համար, մոբիլիզացիայի յենթարկվածների մեջ կա-

տարվող աշխատանքը: Կոմունիստներն ու նրանց համակրողներն ամեն տեղ, վորտեղ կենտրոնացված են մոբիլիզացիայի յենթարկվածները կամ վորտեղ կան կայազորներ, մանավանդ պահեստի գումարտակներ և այլն, պետք է գլխավորեն վորտեղ կանգնեցվեն: Նրանք բոլորն էլ առանց բացառության՝ վոմանք ամեն ուր, մյուսներն, ասենք, չարաթական 4 կամ 8 ժամ պետք է միաժողովեն և աշխատեն մոբիլիզացիային ոգնելու համար և մոբիլիզացիայի յենթարկվածների մեջ, տեղական կայազորի զինվորների մեջ, հարկավ, խիստ կազմակերպված ձևով, յուրաքանչյուրը համապատասխան աշխատանքի նշանակված լինելով՝ ռեզական կուսակցական կազմակերպության և զինվորական իշխանության կողմից:

Անկուսակցական բնակչությունը կամ վոչ կոմունիստական կուսակցության պատկանողը չի կարող, իհարկե, իրենապես աշխատել ընդդեմ Դենիկինի կամ Կոլչակի: Սակայն թույլատրելի չէ այդ հիման վրա ազատել նրան ամեն մի աշխատանքից: Պետք է ամեն տեսակ միջոցներ գտնել, վորպեսզի ամբողջ բնակչությունը գլխավորեն (և առաջին հերթին ավելի ունևորը՝ թե՛ քաղաքում և թե՛ գյուղում) պարտավորվի այս կամ այն ձևով իբրուման մտցնելու՝ մոբիլիզացիային կամ մոբիլիզացիայի յենթարկվածներին ոգնելու համար:

Ոգնություն միջոցառումների հատուկ կատեգորիան պետք է կազմի մոբիլիզացիայի յենթարկվածների ամենաարագ և լավագույն վարժեցմանն ոժանդակելը: Խորհրդային իշխանությունը գորակոչում է բոլոր նախկին սպաներին, յենթասպաներին և այլն: Կոմունիստական կուսակցությունը, իսկ նրա հետևից բոլոր համակրողներն ու բոլոր բանվորները պետք է ոգնություն հասնեն բանվորա-գյուղացիական պետությանը, նախ՝ ամեն կերպ աջակցելով բռնելու ներկայանալուց խուսափող նախկին սպաներին, յենթասպաներին և այլն, յերկրորդ՝ կուսակցական կազմակերպության վերահսկողությամբ և նրան կից կազմակերպելով խմբակներ այնպիսիներեց, վորոնք թեորիապես կամ դործնականապես (որինակ՝ մասնակցելով իմպերիալիստական պատերազմին) սովորել են ռազմական գործը և ի վիճակի յեն ոգնություն իրենց բաժինը տալու:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԴԱՍԱԼԻՔՆԵՐԻ ՄԵՋ

Վերջին ժամանակներս բացահայտ բեկում է կատարվել դասակարգության դեմ մղվող պայքարում: Մի շարք նահանգներում

դասալիքներն սկսել են մասնաշարար բանակ վերադառնալ, դասալիքներն, առանց չափազանցութեան, հորդեցին դեպի կարմիր բանակը: Պատճառն է՝ նախ կուսակցական ընկերների ավելի հմուտ և ավելի սխտեմատիկ աշխատանքը. յերկրորդ՝ գլուղացիները հարածուն այն գիտակցութեամբ, վոր կողջակը և Դենիփները բերում են ավելի վատ կարգերի վերադառնալուն, քան ցափկաններն էյին, — բանվորների և գլուղացիների ստրկութեան, ծեծի, կողոպտման, սպաների ու ագնավականների հասցրած անարդանքի վերականգնումը:

Այդ պատճառով, պետք է ամենուրեք և ամբողջ ուժով ծանախ դասալիքների մեջ և դասալիքներին բանակ վերադարձնելու համար կատարվող աշխատանքի վրա: Այդ ամենաառաջնակարգ և ամենակենսական գործերից մեկն է:

Ի միջի այդոց: Դասալիքների վրա համոզումով ներգործելու հնարավորութեանը և այդ ներգործման հաջողութեանը ցույց է տալիս բանվորական պետութեան միանգամայն հատուկ վերաբերմունքը գլուղացիութեան նկատմամբ, ի տարբերութեան կալվածատիրական և կապիտալիստական պետութեանից: Մահալի ճնշումը կամ սովի ճնշումը — ահա կարգապահութեան միակ աղբյուրը պետութեան այդ վերջին յերկու տեսակների համար: Բանվորական պետութեան կամ պրոլետարիատի գիկտատուբայի համար հնարավոր է կարգապահութեան այլ աղբյուր — գլուղացիներին համոզելը բանվորների կողմից, նրանց ընկերական դաշինքը: Յերբ լսում ես ականատեսների պատմածները, թե այսօրինչ նահանգում (որինակ՝ Ռյազանի) կամավոր կերպով վերադառնում են հազարավոր ու հազարավոր դասալիքներ, վոր միտինդներում յերբեմն աննկարագրելի հաջողութեան է դառնում «ընկեր-դասալիքներին» ուղղված դիմումը, այն ժամանակ սկսում ես պատկերացնել, թե դեռևս մեր կողմից չողտադործված վորքան ուժ կա բանվորների և գլուղացիների այդ ընկերական դաշինքի մեջ: Գլուղացին ունի մի նախապաշարում, վորը տանում է նրան կապիտալիստի հետեից, ետերի հետեից, «առևտրի աղատութեան» հետեից, բայց նա ունի նաև խոհալիստութեան, վորն ավելի ու ավելի բերում է նրան դաշինքի բանվորի հետ:

ՈՒՂՂԱԿԻ ՈԳՆՈՒԹՅՈՒՆ ԲԱՆԱԿԻՆ

Մեր բանակն ամենից ավելի կարիք ունի զգեստի, կոշիկների, գենքի, արկերի մատակարարման: Ավելիված յերկրում կարիք է լինում ահագին ջանքեր գործադրել բանակի այդ պահանջը

բավարարելու համար և միայն Անգլիայի, Ֆրանսիայի, Ամերիկայի ավաղակ կապիտալիստների այն ոգնութեանը, վորը նրանք առատաձեռն կերպով ցույց են տալիս Կոլչակին ու Դենիկին, վիրկում է վերջիններիս մատակարարման պակասութեանից առաջանալիք անխուսափելի կրախից:

Վորքան էլ ավերված լինի Ռուսաստանը, բայց և այնպեւ նրա մեջ դեռ բնավ յերբեք քիչ չեն այն ռեսուրսները, վորոնք դեռ չենք ողտադործել մենք, հաճախ չեմք կարողացել ողտադործել: Դեռևս ռազմական գույքի չգտնված կամ չստուգված շատ պահեստարաններ կան, արտադրական շատ հնարավորութեաններ, վորոնք բայց են թողնված մասամբ չինովնիկների գիտակից սարսափի պատճառով, մասամբ քաջբռնկի, դրասնենկայնութեան, խառնավնթորութեան և անճարակութեան պատճառով — այդ բոլոր «անցյալի մեղքերի» պատճառով, վորոնք այնպիսի անխուսափելիութեամբ և այնպիսի դաժանութեամբ ծանրանում են դեպի նոր հասարակակարգը «թռիչք» գործող ամեն մի հեղափոխութեան վրա:

Այդ կողմից բանակին ուղղակի ոգնութեան ցույց տալիս առանձնապէս կարևոր է: Այդ գործը տնորինող հիմնարկներն առանձնապէս կարիք ունեն «թարմացման», դրսի աշակցութեան, բանվորների և գլուղացիների կամավոր, յեռանդուն, հերոսական նախաձեռնութեանը տեղեկում:

Պետք է վորքան կարելի յե լայն չափով այդ նախաձեռնութեանը կոչել բոլոր գիտակից բանվորներին ու գլուղացիներին, բոլոր խորհրդային գործիչներին, պետք է տարբեր վայրերում և աշխատանքի տարբեր բնագավառներում փորձել այդ կողմից բանակին ոգնելու բազմապիսի ձևերը: «Հեղափոխականորեն տարվող աշխատանք» այստեղ շատ ավելի քիչ է կատարվում, քան այլ ասպարեղներում, իսկ «հեղափոխականորեն տարվող աշխատանքի» կարիքն այստեղ շատ ավելի մեծ է:

Բնակչութեանից գենք հավաքելն այդ աշխատանքի բաղադրուցից մասերից մեկն է: Վոր իմպերիալիստական պատերազմի չորս տարին, ապա ժողովրդական յերկու հեղափոխութեան ապրած մի յերկրում թաղցրած շատ գենք կա գլուղացիների և բուրժուազիայի մոտ, այդ բնական է, այդ աճել է անխուսափելիորեն: Բայց դեռ դեմ այժմ, Դենիկինի անհղ արշավանքի ժամանակ, պետք է պայքարել ամբողջ ուժով: Ով գենքը թաղցնում է կամ ոգնում է թաղցնելու, մեծագույն հանցագործ է բանվորների և գլուղացիների հանդեպ, նա արժանի յե գնդակահար-

ման, վորովհետեւ նա յե մեղավոր հաղարավոր և հաղարավոր լավագույն կարմիր-բանակայինների կորստի համար, վորոնք մեռնում են հաճախ ռազմաճակատներում զենքի սպառնալիքից պատճառով միայն:

Պիտերի ընկերները կարողացան հաղարավոր և հաղարավոր հրացաններ գտնել, յերբ—խիստ կազմակերպված ձեռով—մասսայական խուզարկութիւններ կատարեցին: Միտացած Ռուսաստանը Պիտերից հետ չպետք է մնա, այլ ինչպես ել լինի՝ պետք է հասնի նրան և անցնի նրանից:

Մյուս կողմից, տարակույս չկա, վոր ամենից շատ զենք են թաղցնում գյուղացիները և հաճախ առանց վորեւէ չարակամութեան, այլ սարգապես արմատացած անխտահալութունից զեպի ամեն «պետականութիւն» և այլն: Յեթե մենք կարողացանք հաւաքելով, հմուտ ագիտացիայով, գործին նպատակահարմար մոտեցում ցույց տալով շատ և շատ բան անել (լավագույն նահանգներում), վորպեսզի դատաւիբները կամովին կարմիր բանակ վերադառնան, ապա, անտարակույս, նույնքան շատ, յիթե վոչ ել ավելի կարելի չէ և պետք է անել զենքը կամովին վերադարձնելու համար:

Բանվորներ և գյուղացիներ: Փնտուցեք-գտեք թաղցրած հրացանները և հասցրեք բանակին: Դրանով դուք կիրկեք ձեզ Կոլչակի և Դենիկինի գանակրծութիւնից, զնդակահարումներից, մասսայական ծեծից ու կողոպտումից:

ՎՈՉ-ՌԱԶՄԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿՐՃԱՏՈՒՄԸ

Նախորդում համառոտակի ուրվագծված աշխատանքի նույնիսկ մի մասը կատարելու համար հարկավոր են նորանոր աշխատողներ, այն ել ամենախտահալի, նվիրված, յեռանդուն կոմունիստները: Իսկ վո՞րտեղից վերցնենք նրանց, յերբ բոլորը զանգատվում են այդպիսի աշխատողների սպառնալիքից և նրանց՝ գերհազնածութիւնից:

Անտարակույս, այդ գանգատները շատ բանով իրավացի չեն: Յեթե վորեւէ մեկը ճշտիւ հաշիւարկեր, թե առաջավոր բուն-վորների և կոմունիստների ինչպիսի բարակ շերտը, վայելելով բանվորական և գյուղացիական մասսայի աջակցութիւնն ու համակրանքը, կառավարում եր Ռուսաստանը վերջին 20 ամսվա ընթացքում, ապա այդ ուղղակի անհավատարի կիմար: Իսկ կառավարում եյինք մենք հսկայական հաջողութեամբ, ստեղծելով սո-

ցիալիզմը, հաղթահարելով անլուր դժվարութիւններ, հաղթելով ամեն կողմից գլուխ բարձրացնող թշնամիներին, վորոնք ուղղակի կամ շեղակի կասկած եյին բուրժուազիայի հետ: Յեւ մենք արդեն հաղթեցինք բոլոր թշնամիներին, բացի մեկից—բացի Անտանտից, բացի Անգլիայի, Ֆրանսիայի, Ամերիկայի համաշխարհայնորեն—հզոր իմպերիալիստական բուրժուազիայից, ընդվորում մենք արդեն կոտրեցինք այդ թշնամու մի ձեռքն ել՝ Կոլչակին: մեզ սպառնում է նրա մյուս ձեռքը միայն՝ Դենիկինը:

Պետութիւնը կառավարելու համար, պրոլետարիատի դիլետանտութեան խնդիրներն իրադրութիւն համար բանվորական նոր ուժեր են աճում արագորեն՝ հանձին բանվորական և գյուղացիական այն յերիտասարդութեան, վորը գնալով ավելի անկեղծորեն, ջերմագին անձնվիրաբար սովորում, մարտում է նոր իրավակարգի նոր տպավորութիւնները, զեն և չարտում իր վրայից հին, կապիտալիստական և բուրժուական—դեմոկրատական նախադաշնակների կեղեք, կռում է իրենից ավելի ամուր կոմունիստներ, քան նրանց հին սերունդը:

Բայց վորքան ել արագ է աճում այդ նոր խավը, վորքան ել արագ է սովորում և հասունանում քաղաքացիական պատերազմի և բուրժուազիայի կատաղի դիմադրութեան կրակում, այնուամենայնիւ ամենամոտ ամիսների համար նա մեզ չի կարող տալ պետութիւնը կառավարելու պատրաստի աշխատողներ: Իսկ բանը հենց ամենամոտ ամիսներն են, 1919 թվականի ամառն ու աշունը, վորովհետեւ Դենիկինի զեմ մղվող կոլիւն անհապաղ լուծում է պահանջում և սպասում:

Ռազմական աշխատանքն ուժեղացնելու համար մեծ թիւով պատրաստի աշխատողներ ստանալու նպատակով պետք է կրճատել վոչ ռազմական կամ, ավելի ճիշտ՝ վոչ անմիջական ռազմական, խորհրդային աշխատանքի մի շարք րնագավառներ և հիմնարկներ, պետք է վերակառուցել այդ ուղղութեամբ (այսինքն՝ կրճատելու ուղղութեամբ) այն բոլոր հիմնարկներն ու ձեռնարկութիւնները, վորոնք անպայմանորեն անհրաժեշտ չեն:

Վերցնենք, որինակի համար, Ժողովրդական Տնտեսութեան Գերագույն Խորհրդի գիտական—տեխնիկական բաժինը: Դա վերին աստիճանի ոգտակար հիմնարկ է, վորն անհրաժեշտ է սոցիալիզմը լրիւ կառուցելու համար, բոլոր գիտա—հետազոտական ուժերը ճիշտ հաշիւառելու և բաշխելու համար: Բայց արդո՞ք անպայման անհրաժեշտ է այդպիսի մի հիմնարկութիւն: Իհարկէ,

վոչ: Տալ նրան այն մարդկանց, վորոնց կարելի չէ և պետք է անհապաղ ողորագործել բանակում ու անմիջականորեն բանակի համար կենսական և ծայր աստիճան անհրաժեշտ կոմունիստական աշխատանք կատարելու համար, — ներկա պահին ուղղակի հանցանք կլինեի:

Այդ տեսակ հիմնարկներ և հիմնարկների բաժիններ մեզ մոտ, կենտրոնում ու տեղերում, այնքան ել քիչ չեն: Զգտելով սոցիալիզմի լիակատար իրականացմանը, մենք չենք կարող խսկույն չսկսել նման հիմնարկությունների կառուցումը: Բայց մենք հիմարներ և հանցագործներ կլինենք, յեթե Դենիկինի ասեղ արշավանքի հանդեպ չկարողանանք վերալիզմել մեր շարքերը այնպես, վոր վոչ անպայման անհրաժեշտ ամեն ինչ կանգնեցնենք և կրճատենք:

Խուճապի չմատնելով և կազմակերպական իրարանցման մեջ չընկնելով, մենք վոչ մի հիմնարկ վոչ պետք է վերակառուցենք, վոչ բոլորովին փակենք, վոչ ել—վոր առանձնապես վնասակար է հասցնել աշխատանքի ժամանակ—սկսենք նոր հիմնարկներ կառուցել: Մենք պետք է յերեք, չորս, հինգ ամսով կանգնեցնենք վոչ անպայման անհրաժեշտ բոլոր հիմնարկները և հիմնարկների բաժինները կենտրոնում ու տեղերում կամ, յեթե չի կարելի բոլորովին դադարեցնել դրանք, կրճատենք այդքան (մոտավորապես) ժամանակով, կրճատենք հնարավոր առավելագույն չափով, այսինքն՝ թողնենք անպայման անհրաժեշտ աշխատանքի նվազագույնը միայն:

Դանի վոր մեր գլխավոր նպատակն է՝ միանգամից մեծ թվով պատրաստի, փորձառու, նվիրված, փորձված կոմունիստներ կամ սոցիալիզմին համակրողներ ստանալ ռազմական աշխատանքի համար, մենք կարող ենք ռիսկ անել, վոր խիստ կրճատված հիմնարկներից (կամ հիմնարկների բաժիններից) չառերը ժամանակավորապես առանց վոքսե կոմունիստի մնան, հանձնվեն դրանք ռացառապես բուրժուական աշխատողների ձեռքը: Այդ մի մեծ ռիսկ չէ, վորովհետև խոսքը վոչ անպայման անհրաժեշտ հիմնարկների մասին է միայն. նրանց (կիսով չափ դադարեցրած) գործունեությունը թուլանալուց վնաս կհասնի, բայց վնասը մեծ չի լինի, մեզ բնավ յերբեք չի կործանի: Իսկ ռազմական աշխատանքն ուժեղացնելու համար, անհապաղ և զգալիորեն ուժեղացնելու համար յեռանդի պակասությունը մեզ կարող է կործանել: Այդ պետք է պարզ հասկանալ և դրանից բոլոր հետևություններն անել:

Յեթե նահանգում, գավառում և այլն գերատեսչություն կամ գերատեսչական բաժնի յուրաքանչյուր ղեկավար, կոմունիստների ամեն մի քիչ, առանց մի բոլոր կորցնելու, իր առջև հարց դնի, թե՛ արդյո՞ք անպայման անհրաժեշտ է այսօր չիմնարկել, այսինչ—բաժինը. կկործանվե՞նք արդյոք մենք, յեթե մի քիչ կանգնեցնենք նրան կամ կրճատենք նրա աշխատանքը⁹ 10-ով, բոլորովին առանց կոմունիստների թողնելով նրան, — յեթե այդ հարցադրմանը հաջորդի աշխատանքի արագ ու վճռական կրճատումը և կոմունիստների հանումը (նրանց անպայման վստահելի ողնակների հետ միասին համակրողներից կամ անկուսակցականներից), այն ժամանակ մենք կկարողանանք ամենակարճ ժամանակամիջոցում հարյուրավորներ և հարյուրավորներ ստանալ՝ բանակի քաղաքապետներում, կոմիսարների պաշտոններում և այլն աշխատանք կատարելու համար: Յեւ այն ժամանակ մենք լուրջ շանսեր կունենանք հաղթելու Դենիկինին նույնպես, ինչպես հաղթեցինք ավելի ուժեղ Կոլչակին:

ԱՇԽԱՏԱՆԻ ՄԵՐԶՃԱԿԱՍԱՅԻՆ ԳՈՏՈՒՄ

Ռուսաստանի Սոցիալիստական Ֆեդերատիվ Խորհրդային Հանրապետության մեջ մերձակառային գոտին վերջին շաբաթները չափազանց ընդարձակվեց և արտասովոր արագությունով փոխվեց: Դա պատերազմի վճռական մոմենտի նախադուռն է կամ ուղեկիցը, նրա լուծման մոտեցումը:

Մի կողմից՝ Պրիուրալյեյում և Ուրալում հսկայական մերձակառային գոտին մեր մերձակառային գոտին դարձավ չորհրդի կարմիր բանակի հաղթանակների և Կոլչակի քայքայման, չորհրդի հեղափոխության աճմանը Կոլչակիայում: Մյուս կողմից՝ ե՛լ ավելի մեծ մերձակառային գոտին մերձակառային դարձավ Պրիտերի մոտ և Հարավում մեր կորուստների պատճառով, թշնամու՝ Պրիտերին հսկայական չափով մոտենալու և Հարավից Ուկրաինայի վրա ու Ռուսաստանի կենտրոնի վրա արշավելու պատճառով:

Մերձակառային գոտում կատարվող աշխատանքն առանձնապես կարևոր նշանակություն է ստանում:

Պրիուրալյեյում, վորտեղ Կարմիր բանակն արագորեն առաջ է դնում, բանակում աշխատողների՝ կոմիսարների, քաղաքների անդամների մեջ և այլն, ապա տեղական բանվորների և գյուղացիների մեջ բնական ցանկություն է ծագում՝ հաստատվել նոր

նվաճված տեղում խորհրդային ստեղծարար աշխատանք կատարելու համար. այնքան ավելի բնական ցանկություն, վորքան մեծ է հողնաժողովունը պատերազմից, վորքան ավելի ծանր է Գոլչակի գործած ավերի պատկերը: Բայց չկա ավելի վտանգավոր բան, քան այդ ցանկությունը կատարելը: Այդ սպառնում է թուլացնել հարձակումը, ընդհատել վերջինս, ավելացնել այն բանի շանսերը, վոր Գոլչակը դեռ կկազդուրվի: Այդ մեր կողմից ուղղակի հանցանք կլինե՞ր հեղափոխություն հանդեպ:

Վոչ մի դեպքում արևելյան բանակից վոչ մի ավելորդ աշխատող չվերցնել տեղական աշխատանքի համար¹: Վոչ մի դեպքում չթուլացնել հարձակումը: Լիակատար հաղթանակի միակ շանսն է՝ պրիուրալյան և ուրալյան բնակչության գլխավորին մասնակցությունը, բնակչության, վորը փորձել է կոլչակյան «դեմոկրատիայի» սարսափները, հարձակումը շարունակելը Սիրիերի վրա՝ մինչև հեղափոխության լիակատար հաղթանակը Սիրիերում:

Թո՛ղ Պրիուրալյեյում և Ուրալում շինարարությունն ուշանա, թող նա ավելի թույլ ընթանա գուտ տեղական, յերևտառարդ, անփորձ, թույլ ուժերով: Դրանից մենք չենք կործանվի: Ուրալի և Սիրիերի վրա հարձակումը քուլացնելուց մենք կկործանվեմք, մենք պետք է ուժեղացնեմք այդ հարձակումը Ուրալում ապստամբող բանվորների ուժերով, պրիուրալյան գյուղացիները՝ ուժերով, վորոնք այժմ իրենց կաշվի վրա զդացին, թե ինչ էն նշանակում մենչեիկ Մայսկու և եսեր Չերնովի «սահմանադրական» («учредительские») խոստումները, և ինչ է նշանակում այդ խոստումների իսկական բովանդակությունը, այսինքն՝ Կոլչակը:

Թուլացնել հարձակումն Ուրալի և Սիրիերի վրա, կնշանակի հեղափոխության դավաճանը լինել, բանվորներին և գյուղացիներին Կոլչակի լծից ազատագրելու գործի դավաճանը:

Հենց նոր ազատված մերձակատային գոտում աշխատանք կատարելիս պետք է հիշել, վոր այնտեղ հիմնական խնդիրն է՝ նվաճել վոչ միայն բանվորների, այլև գյուղացիների վտանգությունը դեպի խորհրդային իշխանությունը, գործնականորեն սարգարանել նրանց խորհրդային իշխանություն, վորպես բանվորների և գյուղացիների իշխանություն, եյությունը, միանգամից

¹ Առանց ծայրահեղ կարիքի չվերցնել նրանց ընդհանրապես, այլ փոխադրել կենտրոնական նահանգներից:

յոնել այն ճիշտ կուրսը, վորը յուրացրել է կուսակցությունը՝ քսան ամսվա աշխատանքի հաշվառման հիման վրա: Մենք Ուրալում չպետք է կրկնենք այն սխալները, վորոնք յերբեմն կատարվել են Վերկիտուսիայում և վորոնցից մենք արագորեն ձեռք ենք քաշում:

Պիտերի մերձակատային գոտում և այն հսկայական մերձակատային գոտում, վորն այնքան արագ և անհղորեն ընդարձակվեց Ուկրաինայում ու հարավում, պետք է կատարելապես ամեն ինչ փոխադրել ռազմական դրություն, ամբողջ աշխատանքը, բոլոր ջանքերը, բոլոր խոհերն ամբողջովին յենթարկել պատերազմին և միայն պատերազմին: Այլ կերպ չի կարելի հետ մղել Դենիկինի արշավանքը: Այդ պարզ է: Յեվ այդ պետք է պարզ բմբռնել ու ամբողջովին կենսագործել:

Ի միջի այլոց: Դենիկինյան բանակի առանձնահատկությունն է սպայություն և կազակության առատությունը: Այդ այն տարրն է, վորը մասսայական ուժ չունենալով իր հետևից, չափազանց ընդունակ է արագ դրոշներ, ավանտյուրայի, հուսահատ ձեռնարկումների՝ խուճապ սերմանելու նպատակով, ի սեր ավերի ավեր գործելու նպատակով:

Այդպիսի թշնամու դեմ մղվող պայքարում անհրաժեշտ է բարձրագույն աստիճանի հասցրած ռազմական կարգապահություն և ռազմական զգոնություն: Առիթը բաց թողնել կամ գլուխը կորցնել—նշանակում է կորցնել ամեն ինչ: Ամեն մի պատասխանատու կուսակցական կամ խորհրդային աշխատող պետք է հաշվի առնի այդ:

Ռազմական կարգապահություն և՛ ռազմական, և՛ ամեն մի գործում:

Ռազմական զգաստություն և խստություն, անչեղություն՝ նախազգուշության բոլոր միջոցները ձեռք առնելիս:

ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ ՌԱԶՄԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻՆ
(«ՌԱԶՄԱՊԵՏՆԵՐԻՆ»)

Այն ահադին դավադրությունը, վորը պոռթկաց Կրասնայա Գորկայում¹ և վորի նպատակն էր հանձնել Պետրոգրադը,

¹ «Կրասնայա Գորկա» ամրոցի խռովությունը և առհասարակ ամրոցը դավադրությունը, վորը կազմակերպել էր անդլիական հակահեղափոխությունը 1919 թ. հունիսին, հենց այն ժամանակ յերևան էր բերվել և լուծարվի յենթարկվել ընկեր Ստալինի անձնական ղեկավարությամբ, վորը Պետրոգրադ էր յեկել Կենտկոմի առաջարկանքով՝ Պետրոգրադի պաշտպանությունը կազմակերպելու համար: Խմբ.:

առանձնապես հրամայարար նորից դրեց ռազմական մասնագետ-
ների հարցը և թիկունքում հակահեղափոխություն դեմ պայքա-
րելու հարցը: Տարակույս չկա, վոր պարենային և ռազմական
դրություն սրվելն անխուսափելիորեն առաջ է բերում և մոտ
ապագայում առաջ է բերելու հակահեղափոխականների փորձերի
ուժեղացում (Պիտերի դավադրությունը մասնակցում էր «СОВЪ-
ВОЗРОЖДЕНИЯ»-ն, և՛ կադետները, և՛ մենչևիկները, և՛ աջ եսեր-
ները. առանձին մասնակցում էին, բայց և այնպես մասնակցում
էին նաև ձախ եսերները): Նույնպես անտարակույս է, վոր
ռազմական մասնագետներն ամենամոտ ժամանակներս կտան դա-
վաճանների բարձր տոկոս, ինչպես կուլակները, բուրժուական
ինտելիգենտները, մենչևիկները, եսերները:

Սակայն անուղղելի սխալ և աններելի կամադրվածություն կլի-
ներ դրա պատճառով հարուցել մեր ռազմական քաղաքականու-
թյան հիմունքները փոխելու հարցը: Մեզ դավաճանում են և դա-
վաճանելու յեն հարյուրավոր ու հարյուրավոր ռազմական մաս-
նագետներ, մենք նրանց կտնենք և կգնդակահարենք, բայց մեզ
մոտ սխառեմատիկարար և յերկար ժամանակ աշխատում են հա-
զարավոր ու տասնյակ-հազարավոր ռազմական մասնագետներ,
առանց վորոնց չեր կարելի ստեղծել այն կարմիր բանակը, վորն
աճել է անիժյալ պարտիզանչիկնայից և կարողացել է փայլուն
հաղթանակներ տանել Սրեկելքում: Փորձառու և մեր ռազմական
գեորատեսություն գլուխ կանգնած մարդիկ իրավամբ մատնա-
նշում են, վոր այնտեղ, վորտեղ ամենից ավելի խստիվ է կի-
րառված կուսակցական քաղաքականությունը ռազմական մասնա-
գետների նկատմամբ և պարտիզանչիկնան արմատախիլ անելու
նկատմամբ, այնտեղ, վորտեղ ամենից ավելի ամուր է կարգա-
պահությունը, վորտեղ ամենից ավելի խնամքով է կատարվում
քաղաքատանը զորքերում և կոմիսարների աշխատանքը, այն-
տեղ, ընդհանուր առմամբ և ամբողջովին վերցրած, ամենից քիչ
են լինում ռազմական մասնագետների մեջ դավաճանել ցանկա-
ցողներ, այնտեղ ամենից քիչ հնարավորություն կա այդ ցանկա-
ցողների համար՝ իրենց դիտավորությունն իրագործելու: Այն-
տեղ թափթփվածություն չկա բանակում, այնտեղ ավելի լավ է
զորաշարքը և բանակի վողին, այնտեղ ավելի շատ են հաղթա-
նավները: Պարտիզանչիկնան, նրա հետքերը, նրա մնացորդները,
նրա տարբերը, և՛ մեր, և՛ ուկրաինական բանակին պատճառե-
ցին աղետներ, քայքայում, պարտություններ, կատաստրոֆներ:

Մարդկանց կորուստ և ռազմական գույքի կորուստ, անչափ ավե-
լի, քան ռազմական մասնագետների բոլոր դավաճանություն-
ները:

Մեր կուսակցական ծրագիրը՝ թե՛ բուրժուական մասնա-
գետների ընդհանուր հարցում, թե՛ նրանց տեսակներից մեկի՝
ռազմական մասնագետների մասնավոր հարցում, լիակատար
ճշտությամբ վորոշել է կոմունիստական կուսակցության քաղա-
քականությունը: Մեր կուսակցությունը պայքարում է և «անո-
ղոքարար պայքարելու յե կարծեցյալ-ռադիկալ, բայց իսկապես
տգետ այն մեծամտություն դեմ, թե իրր աշխատավորներն ի վի-
ճակի յեն հաղթահարելու կապիտալիզմն ու բուրժուական իրա-
վակարգը, առանց սովորելու բուրժուական մասնագետներից,
առանց նրանց ոգտադործելու, առանց նրանց կողքին աշխատան-
քի յերկարատե դպրոց անցնելու»:

Հարկավ, դրա հետ միասին, կուսակցությունը «տվյալ
բուրժուական խալին մինչև իսկ նվազագույն քաղաքական դի-
ջում» չի անում, կուսակցությունը ճնշում է և «անողոքարար
ճնշելու յե նրա ամեն մի հակահեղափոխական վրտնձգություն-
նը»: Բնական է, վոր յերր նման «վրտնձգություն» տեղի յե ունե-
նում կամ ուրվագծվում է ավելի կամ պակաս հավանականու-
թյամբ, ապա դրա «անողոք ճնշումը» այլ հատկություններ է
պահանջում, քան սովորողի դանդաղությունը, զգուշությունը,
տրամադրությունը, վորոնք պահանջում է «յերկարատե դպրո-
ցը» և վորոնք դաստիարակում է նա մարդկանց մեջ: Ռազմական
մասնագետների «կողքին աշխատանքի յերկարատե դպրոցով»
զբաղված մարդկանց տրամադրության և ռազմական մասնագետ-
ների «հակահեղափոխական վրտնձգությունն անողոքարար ճնշ-
չելու» անմիջական խնդրով տարված մարդկանց տրամադրու-
թյան միջև յեղած հակասությունը հեշտությամբ կարող է հան-
գել և հանգում է բաղխումների ու կոնֆլիկտների: Նույնը վե-
րաբերում է անձնական անհրաժեշտ տեղաշարժումներին, յեր-
բեմն մեծ թվով ռազմական մասնագետների տեղաշարժումնե-
րին, վորի պատճառն են հակահեղափոխական «վրտնձգություն-
ները» այս կամ այն դեպքը, առավել ևս մեծ դավադրություն-
ները:

Այդ բաղխումներն ու կոնֆլիկտները մենք լուծում ենք և լու-
ծելու յենք կուսակցական ճանապարհով, պահանջելով նույնը կու-
սակցության բոլոր կազմակերպություններից և պնդելով, վոր

հի
986



Թույլ չտրվի մինչև իսկ նվազագույն վնաս գործնական աշխատանքին, մինչև իսկ նվազագույն ձեռքում՝ անհրաժեշտ միջոցներ ձեռք առնելիս, տատանման նշույլ անգամ՝ մեր ռազմական քաղաքականություն համար սահմանված հիմունքներն անցկացնելիս:

Յեթե միջանի կուսակցական ուղիները սխալ տոն են վերցնում ռազմական մասնագետների վերաբերմամբ (ինչպես վերջերս յեղել է Պետրոգրադում), կամ յեթե առանձին դեպքերում ռազմական մասնագետների «քննադատությունն» այլասերվում, ուղղակի խոչընդոտ է դառնում նրանց ոգտադործման սխառմատիկ և համառ աշխատանքի դեմ, կուսակցությունն իսկույն ուղղում է և ուղղելու յե այդ սխալները:

Դրանք ուղղելու գլխավոր և հիմնական միջոցն է՝ քաղաշխատանքի ուժեղացումը բանակում և մորիլլոցավորների մեջ, կոմիսարների աշխատանքի ձիգ տալը բանակում, նրանց կազմի բարելավումը, նրանց մակարդակի բարձրացումը, նրանց կողմից գործով իրականացնելն այն բանի, ինչ վոր պահանջում է կուսակցության ծրագիրը և վորը շատ հաճախ այնքան էլ բավարարչի կատարվում, այն է՝ «հրամանատարական կազմի նկատմամբ (բանակի) բազմակողմանի վերահսկողությունը կենտրոնացնել բանվոր դասակարգի ձեռքում»: Ռազմական մասնագետների քննադատությունը հեռվից, գործը «գրոհով» ուղղելու փորձերը շատ հեշտ բան է, ուստի և անհուսալի ու վնասակար: Բոլորը, ովքեր գիտակցում են իրենց քաղաքական պատասխանատվությունը, ովքեր վշտանում են մեր բանակի թերություններից, թո՛ղ գնան շարքերն ու գորատողանները, վորպես կարմիր բանակայիններ կամ հրամանատարներ, քաղաշխատողներ կամ կոմիսարներ. թո՛ղ ամեն մեկն աշխատի—կուսակցության ամեն մի անդամ իր համար տեղ կգտնի ըստ իր ընդունակությունները—ռազմական կազմակերպության մեջ՝ վերջինս բարելավելու համար:

Խորհրդային իշխանությունը վաղուց առաջիկադույն ուշադրություն է դարձրել այն բանի վրա, վոր բանվորները, ապա նաև գյուղացիները, և մանավանդ կոմունիստները, կարողանան լրջորեն ուսումնասիրել ռազմական գործը: Այդ կատարվում է մի շարք հաստատություններում, հիմնարկներում, դասընթացներում, բայց այդ դեռ շատ ու շատ անբավարար է կատարվում: Անձնական նախաձեռնությունը, անձնական յեռանդը այս-

տեղ դեռ շատ բան պետք է անեն: Առանձնապես կոմունիստները պետք է ջանասիրությամբ սովորեն զննադրային, հրետանային, դրահային գործը և այլն, վորովհետև այստեղ մեր հետամնացությունն ավելի զգալի յե, այստեղ մեծ թվով սպաներ ունեցող հակառակորդի գերազանցությունն ավելի նշանակալի յե, այստեղ հնարավոր է, վոր վոչ վատահելի ռազմական մասնագետը խոշոր վնաս հասցնի, այստեղ կոմունիստի դերը վերին աստիճանի մեծ է:

ՊԱՅՔԱՐ ՀԱՅԱՆԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԴԵՄ ԹԻԿՈՒՆՔՈՒՄ

Ինչպես և անցյալ տարի հուլիսին, հակահեղափոխությունը մեզ մոտ թիկունքում, մեր մեջ, գլուխ է բարձրացնում:

Հակահեղափոխությունը հաղթված է, բայց դեռ հեռու յե վոչընչացված լինելուց և, հասկանալի յե, ոգտադործում է Դենիկինի հաղթանակները և պարենային կարիքի սրվելը: Իսկ ուղղակի և բացահայտ հակահեղափոխության հետևից, սև հարյուրյակի ու կադետների հետևից, վորոնք ուժեղ են իրենց կապիտալով, Անտանտի իմպերիալիզմի հետ իրենց ունեցած ուղղակի կապով, դիկտատուրայի անխուսափելիության իրենց ըմբռնումով և այն իրականացնելու (կոչակարար) ընդունակությամբ,—նրանց հետևից քարշ են դալիս, ինչպես միշտ, տատանվող, կամադուրիկ, իրենց գործերը խոսքերով կարդարող աջ եսերները և ձախ եսերները:

Վո՛չ մի պատրանք այդ բանի նկատմամբ: Մենք դիտենք այն «սննդատու միջավայրը», վորը ծնում է հակահեղափոխական ձեռնարկումներ, պոռթկումներ, դավադրություններ և այլն, շատ լավ դիտենք: Դա բուրժուազիայի, բուրժուական ինտելիգենցիայի միջավայրն է, գյուղերում՝ կուլակներինը, ամենուրեք՝ «անկուսակցական» մարդկանց, ապա եսերների ու մենչևիկների միջավայրը: Պետք է յեռապատկել և տասնապատկել հսկողությունն այդ միջավայրի նկատմամբ: Պետք է տասնապատկել զգաստությունը, վորովհետև այդ կողմից հակահեղափոխական վտանգությունները բացարձակապես անխուսափելի յեն ներկա պահին և մոտ ապագայում: Այդ հողի վրա բնական են նաև կամուրջներ պայթեցնելու, գործադուլներ սարքելու, ամեն տեսակ լրտեսական խորամանկություններ անելու և այլն կրկնակի փորձեր: Նախադուլության բոլոր միջոցները՝ ամենաուժեղ, սխառմատիկ, կրկնակի, մասսայական ու հանկարծակի միջոցներ անհրաժեշտ

են առանց բացառութեան այն բոլոր կենտրոններում, վորտեղ «պատասպարվելու» գեթ վո՛րեւ հնարավորութեան ունի հակահեղափոխականների «անհրաժեշտ միջավայրը»:

Մենչեիկինների, աջ և ձախ եսերների նկատմամբ պետք է հաշիւ առնել վերջին փորձը: Նրանց «պերիֆերիայի» մեջ, նրանց ձգտող մարդկանց մեջ, անտարակույս, տեղաշարժ կա Կոլչակից ու Դենիկինից դեպի մերձեցում Խորհրդային իշխանութեան հետ: Այդ տեղաշարժը մենք հաշիւ յենք առել, և ամեն անգամ, յերբ նա դրսևորվում է գեթ վորեւս ուսուցիչ, մեր կողմից վորոշ քայլ ենք արել առաջ: Մեր այդ քաղաքականութեանը վոչ մի դեպքում չենք դադարանի, և այն «թուլքները» թիւլը, վորոնք կատարվում են Կոլչակի ու Դենիկինի կողմը քաղաքականութեան կողմը քաղաքականութեանը դեպի Խորհրդային իշխանութեան կողմը քաղաքականութեանը դեպի Խորհրդային իշխանութեան կողմը քաղաքականութեանը դեպի Խորհրդային իշխանութեան կողմը քաղաքականութեանը:

Բայց տվյալ պահին մանր-բուրժուական դեմոկրատիան, եսերների ու մենչեիկինների գլխավորութեամբ, կամադուրի ու տատանվող, ինչպես միշտ, քիթը քամուն է բռնում և տատանվում է հաղթող Դենիկինի կողմը: Այդ առանձնապես ճիշտ է ձախ եսերների, մենչեիկինների «քաղաքական առաջնորդների» նկատմամբ (ինչպես Մարտովը և Ընկ.), աջ եսերների (ինչպես Չերնովը և Ընկ.) և ընդհանրապես նրանց «գրական խմբակների» նկատմամբ, վորոնց անդամները, բացի ուրիշ ամեն բանից, չափազանց վիրավորված են իրենց քաղաքական լիակատար կրթից և այդ պատճառով Խորհրդային իշխանութեան դեմ ավանդուրաններ նյութելու «հակումն» ունեն, վոր հազիվ թե հնարավոր լինի արմատախիլ անել:

Չպետք է խաբվել նրանց առաջնորդների խոսքերից և իդեոլոգիայից, նրանց անձնական ազնվութեանից կամ կեղծավորութեանից: Այդ կարևոր է նրանցից յուրաքանչյուրի կենսագրութեան համար: Այդ կարևոր է քաղաքականութեան տեսակետից, այսինքն՝ դատարարների փոխհարաբերութեան, միլիտանտ մարդկանց փոխհարաբերութեան տեսակետից: Մարտովը և Ընկ. «Կ. Կ. անունից» հանդիսավոր կերպով դատապարտում են իրենց «ակտիվիստներին» և սպառնում են (մշտապես սպառնում են) վտարել նրանց կուսակցութեանից: Դրանով ամենևին չի անհետանում այն փաստը, վոր «ակտիվիստները» մենչեիկինների մեջ ամենից ավելի ուժեղ են, թագնվում են մենչեիկինների հետևը և

իրենց կոլչակյան-դենիկինյան աշխատանքն են կատարում: Վոլսկին և Ընկ. դատապարտում են Ավստրո-սլոնի, Չերնովին և Ընկ., բայց այդ բնավ չի խանգարում, վոր այդ վերջինները վոլսկուց ավելի ուժեղ լինեն, Չերնովին չի խանգարում ասելու՝ «Յեթե վոչ մենք և՛ յեթե վոչ այժմ, ապա ել ո՞վ և յե՞րբ է տապալելու բոլշևիկներին»: Ձախ եսերները կարող են «աշխատել» «ինքնուրույն», առանց վորեւս համաձայնութեան գալու ուսուցիչի հետ, Չերնովին հետ, սակայն գործով նրանք Դենիկինի նույնպիսի դաշնակիցներն ու խաղալիքն են նրա խողով, ինչպես հանդուցյալ ձախ եսեր Մուրավյովը, Նախկին գլխավոր հրամանատարը, վորը «գաղափարական» գրգռատառնեղով բաց է անում ռազմաճակատը չեխո-սլովակների և Կոլչակի առջև:

Մարտովը, Վոլսկին և Ընկ. յերկու պայքարող կողմերից «ավելի բարձր» են յերեակայում իրենց, «յերկրորդ կողմն» ստեղծելու ընդունակ են յերեակայում իրենց:

Այդ ցանկութեանը, թող նա թեկուզ անկեղծ լինի, մնում է վորպես մանր-բուրժուական դեմոկրատի պատրանք, դեմոկրատ, վորը դեռ այժմ էլ, 1848 թվականից 70 տարի անց, չի սովորել այդ-բնեւ, այն, վոր կապիտալիստական միջավայրում հնարավոր է կա՛մ բուրժուազիայի դիկտատուրան, կա՛մ պրոլետարիատի դիկտատուրան և անկարելի չէ, վոր գոյութեան ունենա վորեւս յերկրորդ բան: Մարտովները և Ընկ., յերկու, այդ պատրանքով ել կմեռնեն: Այդ նրանց գործն է: Իսկ մեր գործն է հիշել, վոր գործնականում անխուսափելի չեն այդ տեսակ մարդկանց տատանումներն այսօր դեպի Դենիկինը, վաղը դեպի բոլշևիկները: Յեւլ այսօր պետք է անել ա՛յս օրվա գործը:

Մեր գործն է՝ հարցն ուղղակի դնել: Վո՞րն է ավելի լավ՝ բռնել և բանտ նստեցնել, յերեմն նույնիսկ զնգակահարել հարյուրավոր դավաճաններ կադետներից, անկուսակցականներից, մենչեիկիններից, եսերներից, վորոնք «հանդես են գալիս» (վո՛րը զենքը ձեռին, վո՛րը դավադրութեամբ, վո՛րն ագիտացիայով ընդեմ մօրիլիզացիայի, ինչպես տապալիքները կամ յերկաթուղայինները մենչեիկիններից և այլն), ընդդեմ Խորհրդային իշխանութեան, այսինքն՝ հոգուտ Դենիկինի: Թե՞ գործն այնտեղ հասցնել, վոր Կոլչակին ու Դենիկինին թույլ տանք կոտորելու, գնդակահարելու, մինչև մեռնելու աստիճան ծեծելու տանյակահարավոր բանվորներին և գյուղացիներին: Ընտրութեան անելը դժվար չէ:

Հարցն այսպես է դրված և միայն այսպես:

Ով մինչև այժմ այս չի հասկացել, ով ընդունակ է նվալու այսպիսի վճռի «անարդարություն» առթիվ, նրանից պետք է ձեռք քաշել, նրան պետք է մատնել հրապարակային ծաղրի ու խայտառակության:

ԲՆԱԿԶՈՒԹՅԱՆ ԳԼԽՈՎԻՆ ՄՈՒԲԻԼԻԶԱՅԻԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԱՄԱՐ

Խորհրդային հանրապետությունը համալսարհային կապիտալի կողմից պաշարված բերդ է: Նրանից, վորպես Կոլչակից պատասպարվելու ապաստարանից, ոգտվելու իրավունք, և առհասարակ նրանում պարելու իրավունք մենք կարող ենք ճանաչել միայն նրա համար, ով ակտիվ մասնակցում է պատերազմին և ամեն կերպ ոգնում է մեզ: Այստեղից բղխում է մեր իրավունքն ու պարտականությունը՝ գլխովին մորիլիզացիայի յենթարկել բնակչությունը պատերազմի համար՝ վորին ուղղակի իմաստով ռազմական աշխատանքի, վորին պատերազմի ամեն տեսակ ռազմական գործունեություն համար:

Այդ լրիվ իրականացնելու համար անհրաժեշտ է իդեալական կազմակերպություն: Յեվ վորովհետև մեր պետական կազմակերպությունը հեռու յե կատարյալ լինելուց (վոր բոլորովին զարմանալի չէ, յեթե նկատի առնենք նրա յերիտասարդությունը, նորությունը և նրա զարգացման բացառիկ դժվարությունները), ապա կազմակերպական ամենավնասակար պրոթեկտորություն կլինեն լայն չափով, միանգամից, ձեռնամուխ լինել այդ ասպարեզում իրականացնելու վորևե լիակատար բան, կամ թեկուզ վորևե շատ լայն գործ:

Սակայն այդ տեսակետից իդեալին մոտենալու համար մանակի շատ բան կարելի յե անել, և այդ կողմից մեր կուսակցական գործիչների, մեր խորհրդային աշխատողների «նախաձեռնությունը» դեռ շատ ու շատ անբավարար է:

Այստեղ բավական է դնել այդ հարցը և ընկերների ուշադրությունը հրավիրել դրա վրա: Վորևե կոնկրետ ցուցում կամ նախագիծ տալու կարիք չկա:

Միայն նշենք, վոր Խորհրդային իշխանությունն ամենից ավելի մոտիկ մանր-բուրժուական դեմոկրատները, վորոնք, ինչպես ընդունված է, իրենց սոցիալիստներ են անվանում, որինակ՝ «ձախ» մենչեիկներին մի քանիսը և այլն, առանձնապես

սիրում են զայրանալ պատանդ վերցնելու, նրանց կարծիքով, «բարբարոսական» միջոցի դեմ:

Թո՛ղ զայրանան իրենց համար, բայց առանց դրան պատերազմ մղել չի կարելի, և վտանգը սրվելիս անհրաժեշտ է այդ միջոցը գործադրել, բոլոր իմաստներով, ընդարձակել և հաճախացնել: Շատ անգամ, որինակ, մենչեիկյան կամ գեղին տպագրիչները, յերկաթուղայինները «վարչականներից» և զաղանի սպեկուլանտներից, կուլակները, քաղաքային (և գյուղական) բնակչության ունեւոր մասը և դրանց նման տարրերը սարսափի փոխարկվող անփուլթ-հանցավոր և անչափ լիտի անտարբերությամբ են վերաբերվում Կոլչակից և Դենիկինից պաշտպանվելու գործին: Պետք է կազմել այդ տեսակ խմբակների ցուցակներ (կամ հարկադրել նրանց, վոր իրենք կազմեն խմբակներ փոխադարձ յերաշխալորություններ) և վո՛չ միայն խրամատային աշխատանքի դնել նրանց, ինչպես արվում է յերբեմն, այլև նրանց վրա դնել կարմիր Բանակին ամենաբազմապիսի և բազմակողմանի նյութական ոգնություն ցույց տալու գործը:

Կարմիր-բանակայինների դաշտերն ավելի լավ կմշակվեն, կարմիր-բանակայիններին սնունդ, մախորկա և այլ անհրաժեշտ առարկաներ մատակարարեն ավելի լավ հիմքերի վրա կդրվի, առանձին դավադրությունից և այլն հազարավոր ու հազարավոր բանվորների և գյուղացիների կորչելու վտանգը զգալիորեն կնվազի, յեթե ավելի լայն, ավելի բազմակողմանի և ավելի հմուտ կերպով գործադրենք այդ միջոցը:

«ԱՇԽԱՏԱՆՔ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆՈՐԵՆ»

Ամփոփելով վերև տվածները, մենք կստանանք մի պարզ հանրագումար. բոլոր կոմունիստներից, բոլոր գիտակից բանվորներից ու գյուղացիներից, յուրաքանչյուրից, ով չի ուզում թույլ տալ Կոլչակի և Դենիկինի հաղթանակը, անհապաղ և մոտակա ամիսների ընթացքում պահանջվում է յեռանդի արտասովոր վերելք, պահանջվում է «աշխատանք հեղափոխականորեն»:

Յեթե Մոսկվայի սոված, հոգնած և տանջված յերկաթուղայինները, թե՛ մասնագետ բանվորները, թե՛ սևագործ բանվորները կարողացան հանուն հաղթանակի ընդդեմ Կոլչակի և ընդհուպ մինչև լիակատար հաղթանակը նրա դեմ «կոմունիստական շարաթորյակներ» սարքել, ձրի աշխատել շարաթական միջանի ժամ և ընդմին զարգացնել աշխատանքի չտեսնված, սովորակա-

նից մի քանի անգամ ավելի բարձր արտադրողականություն, առաջ
այդ ապացուցում ե, վոր դեռ չատ ու չատ բան կարելի չե
անել:

Յեւ մենք պետք ե անենք այդ շատը:

Այն ժամանակ մենք կհաղթենք:

Ու. Կ. (բուշուխների) Կ. Կ. Կ.



ԲՈՎԱՆՆԱԿԱՆ ՓՅՈՒՆ

	Եջ
Թոճենաի հիմնական խնդիրը	4
Կուլչակի և Դենիկինի մասին ճշմարտությունը ժողովրդին բացատրելը	6
Աշխատանք մոբիլիզացիայի յենթարկվողների մեջ	6
Աշխատանք դասավիճակների մեջ	7
Ուղղակի ոգնություն բանակին	8
Վոչ-նաղմական աշխատանքի կրճատումը	10
Աշխատանք մեքենայատաշին գոտում	13
Վերաբերմունք ռազմական մասնադասերին (Հասարակական կյանքին)	15
Պայքար հակահեղափոխության դեմ թիկունքում	19
Բնակչության գլխավոր մոբիլիզացիան պատերազմի համար	22
Պաշտոնի հեղափոխականներին	26

Ս. Հակոբյանի խմբագրական հսկողությամբ
Տեխն. խմբ. Ս. Խաչատրյան
Թրքագրիչ Ա. Մանուկյան
Գրաբով սրբագրիչ Յե. Տ. Միքայելյան

Գրավիտի լիազոր № Վ. 1084, հրատ. № 771
Գրավիտի № 293, տիրած 6000
Հանձնվել և արտադրության 27/XII 1939 թ.
Ստորագրվել և ավագորություն 14/I 1940 թ.
Դիմել 40 կ.

Գրադրական գրականության պետական հրատարակչության
տպարան, Յերեան, Ալլահիերդյան № 65

9:323.2(47)«1918:1922»

«Ազգային գրադարան



NL0170537

4460 40 ч.

В. И. ЛЕНИН

ВСЕ НА БОРЬБУ С ДЕНИКИНЫМ!

Государственное издательство политической литературы
Москва © 1940